ՀՀ Արմավիրի մարզի Այգեշատ (Արմ.) համայնքի 2012թ – ի համայնքի ղեկավարի առաջի կիսամյակի հաշվետվություն

1. Գործավարություն.

2012թ – ի առաջի կիսամյակի ընթացքում համայնքի բնակիչներից ստացվել է 42 դիմումներ և առաջարկություններ, որոնք ստացել են իրենց համապատասխան լուծումները: Համայնքի բնակիչներին տրամադրվել են 222 հատ տեղեկանքներ, բնութագրեր: Հղվել են 61 հատ պաշտոնական գրություններ մարզային և ֆեդերալ ենթակայության կառույցների ղեկավարներին: Համյանքի ղեկավարի կողմից ընդունվել է 42 որոշում: Արձակվել է 4 կարգադրություն:

2. Ավագանու գործունեություն.

2012թ – ի առաջի կիսամյակի ընթացքում համայնքի ավագանին գումարել է 3 հերթական նիստ: Ավագանու քննարկմանն են ներկայացվել 9 դիմումներ և ստացել իրենց համապատասխան լուծումները:

3. Գյուղատնտեսության ոլորտ.

Հաշվետու ժամանակահատվածում համայնքի առկա հողատարածքներն ու ցանքերն են.

բնակավայրային նշանակության հողեր – 140 հա

գյուղ. նշանակության հողատարածք – 352 հա, որից

խաղողի այգի – 50.1 հա

պտղատու այգի – 66.0 հա

2012թ – ի կատարվել է 99 հա. հացահատիկի, լոբու, 20 հա., կարտոֆիլի 4 հա., բոստանային կուլտուրաների 31հա., վարունգի 10 հա., լոլիկի 23 հա., սեղանի ճակնդեղ 5 հա., սոխի 45 հա., և այլ բանջարեղենի 17 հա. ցանքեր:

Անասնագլխաքանակ.

խոշոր եղջերավոր անասուններ – 426 գլուխ, որից կովեր՝ 130 գլուխ

մանր եղջերավոր անասուններ – 1897 գլուխ ոչխար, որից մայրեր՝ 1418

149 խոզեր, որից մայրեր՝ 23

մեղվաընտանիք – 599

4. Հողի հարկ և գույքահարկ.

2012թ – ին համայնքային բյուջեով նախատեսվել է 8400. 0 հազար դրամ հողի հարկ: 01.07.2012թ. դրությամբ համայնքի հողօգտագործողներից գանձվել և մուտք է արվել համայնքի բյուջե 827.7 հազար դրամ հողի հարկ, որը կազմում է համայնքի տարեկան հողի հարկի 9,8% - ը:

Գույքահարկը բյուջեի եկամտային մասով նախատեսվել է 2799.0 հազար դրամ:

01.07.2012թ – ի դրությամբ գանձվել և մուտք է արվել համայնքի բյուջե 75.0 հազար դրամ, որը կազմում է տարեկան գույքահարկի 2,6% - ը: 2012 թ- ի բյուջեով նախատեսվել է 3030. 0 հազար դրամ տեղական տուրքեր և վճարներ: 01.07.2012թ – ի դրությամբ գանձվել և մուտք է արվել համայնքի բյուջե 50.0 հազար դրամ, որը կազմում է տարեկան 1,6% :

2012 թ – ի բյուջեով պետության կողմից տարվա ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիան կազմել է 21932.0 հազար դրամ, որը ֆինանսավորվել է 50% - ով: 2012թ – ի բյուջեում սեփական եկամուտները նախատեսվել է 14264.6 հազար դրամ 01.07.2012թ. դրությամբ սեփական եկամուտների փաստացի մուտքերը կազմել են 952.9 հազար դրամ:

Ծախսեր.

Այգեշատի գյուղապետարանը 2012թ – ի հունվար ամսից առ 01.07.2012թ – ի դրությամբ կատարել է հետևյալ ծախսերը:

1. վճարվել է ընթացիկ աշխատավարձ – 6324.4 հազար դրամ
2. փոխանցվել է սոց. վճար – 1393.7 հազար դրամ
3. կատարվել է թերթի բաժանորդագրության ծախս – 15. 0 հազար դրամ
4. մասնագիտական ծառայության համար փոխանցվել է - 219. 3 հազար դրամ
5. համակարգչային ծառայության համար փոխանցվել է – 21. 7 հազար դրամ
6. փոխանցվել է էլեկտրոէներգիայի գումար – 2281.5 հազար դրամ
7. փոխանցվել է գազի օգտագործման գումար – 286.7 հազար դրամ
8. Ջենիթ հակակարկտային կայանի լիցքավորման համար փոխանցվել է - 180.0 հազար դրամ
9. աղբահանություն կազմակերպելու համար կատարվել է ծախս – 210.0 հազար դրամ
10. մայիսի 28-ի և վերջին զանգի միջոցառումների համար կատարվել է ծախս – 300.0 հազար դրամ
11. մանկապարտեզին փոխանցվել է սուբսիդիա - 1034.0 հազար դրամ
12. մանկապարտեզին գույք ձեռք բերելու համար ծախսվել է - 990.0 հազար դրամ

13. Նվիրատվություն է արվել շահույթ չհետապնդող կազմակերպություններին – 300.0 հազար դրամ

Ազգաբնակչություն.

ա) Համայնքի փաստացի բնակչությունը կազմում է 2089 մարդ:

2012թ – ի առաջի կիսամյակի ընթացքում Այգեշատ համայնքում ծնվել է 7 երեխա, գրանցվել է 5 մահ:

Ընտանեկան նպաստ ստացողներ 16 ընտանիք:

Համայնքում թոշակառուները 231 մարդ է:

5. Կրթություն և գիտություն.

Համայնքում գործում է մեկ դպրոց 201 աշակերտով: Մեկ մանկապարտեզ 7 աշխատողով:

6. Մշակույթ.

Համայնքը ունի մեկ մշակույթի տուն 2 աշխատողով, գործող գրադարան 1 աշխատողով:

Մշակույթի տանը գործում է ազգագրական պարերի խումբ՝ 42 երեխաներով:

7. Առողջապահություն.

Համայնքում գործում է բժշկական ամբուլատորիա 6 աշխատողով:

8. Զինակոչ.

Համայնքի ղեկավարի և աշխատակազմի գործուն աջակցությամբ պատշաճ կերպով կազմակերպվել է 2012թ-ի գարնանային զինակոչը և կատարվել է պլան առաջադրանքը:

9 . Միջոցառումներ և սոցիալական ոլորտ.

Պատշաճ կերպով նշվում են ՀՀ պետական տոները և հիշատակի օրերը: Ըստ հարկի նշվում և կազմակերպվում են Հայրենական Մեծ պատերազմում տարած հաղթանակի 67 ամյակը, մարտի 8-ի տոնը, այցելություններ են անցկացվում զոհված ազատամարտիկների շիրիմներին:

Համայնքում մայիսի 9- ին Շուշիի ազատագրման և Հայրենական Մեծ պատերազմում տարած հաղթանակի օրվա կապակցությամբ անցկացվել է շախմատի առաջնություն, հաղթողները

պարգևատրվել են հուշանվերներով և պատվոգրերով:

Պարբերաբար իրականացվում է գյուղի փողոցների աղբահանությունը: Անխափան իրակա-

նացվում է խմելու ջրի մատակարարումը:

10. Համայնքի հիմնախնդիրներ.

ա) Համայնքի հիմնախնդիրներից է համարվում համայնքային նշանակության ճանապարհների նորոգումը:

բ) Վերանորոգման կարիք ունի նաև գյուղապետարանի շենքը:

Այգեշատի գյուղապետ՝ Ա. Մխիթարյան